ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՊՐՈՖԵՍՈՐ ԴԻԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ

Posted on June 2, 2024 by Keghart



Category: Opinions

Երևան, 18 Մայիս 2024

Գեղարդ.- *Ծանոթացրեք մեզ՝ ո՞վ է Դիանա Համբարձումյանը:*

Պրոֆեսոր Դիանա Համբարձումյան (Պրոֆ. Դ.Հ).- Շնորհակալ եմ հարցազրույցի հրավերի համար:
Միշտ պատրաստակամ եմ համագործակցելու նրանց հետ, լինեն օտարերկրացիներ, թե իմ



հայրենակիցները Հայաստանում և արտասահմանում, որոնք իրապես հետաքրքրվում են ոչ այնքան անձիս գոյությամբ, որքան կյանքիս գործով, այս դեպքում՝ իմ գրական կենսագրությամբ: Այդ հետաքրքրությունն ինքնին յուրատեսակ գնահատություն է:

Ծանոթացեք՝ Դիանա Համբարձումյանն է: Այսպես հաճախ են ինձ ներկայացնում գրող ընկերներս, դասախոս գործընկերներս, ներկա ու վաղեմի ուսանողներս, և դա ինձ դուր է գալիս, մյուս դեպքերում ասում են՝ ծանոթացեք՝ մայրիկս է, քույրս է, կինս է, տատիկս է, բարեկամուհիս է, հարևանս է, կամ պարզապես՝ ընկերս է՝ Դիանան. դա ինձ նույնպես դուր է գալիս: Ինքս ինձ ներկայացնելիս ասում եմ՝ ես Դիանան եմ, ու գրեթե միշտ ժպտում եմ, քանի որ մտքումս շարունակում եմ՝ հռոմեական աստվածուհի եմ, Ուելսի իշխանուհի, Հայկ Համբարձումյանի աղջիկն եմ, ինձ մի աչքով չնայեք: Օտար ամբիոններից, հատկապես գրական փառատոներում և հանդիպումներում ինձ ներկայացնելիս անուն-ազգանվանս կողքին արժանապատվորեն ավելացնում եմ՝ հայ գրող, թարգմանիչ, իսկ միջազգային գիտաժողովներում համեստորեն նշում եմ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Երբ պաշտոնս են հարցնում, խունջիկ-մունջիկ բացատրում եմ՝ Բրյուսովի համալսարանի Անգլերենի թարգմանության ամբիոնի պրոֆեսոր եմ. քիչ բան չէ: Բայց այս ամենից առաջ Դիանա Համբարձումյանը հավատավոր մարդ է, որը ներում է իր թշնամիներին, չի ներում իր երկիրը ասպատակողներին, սիրելիներին նվիրվում է անշահախնդրորեն, ումից հիասթափվում

է, պոչը քաշում ու հեռանում է՝ իբրև ամենախիստ պատիժ, (որն ավելի շատ ուղղված է իրեն, քան դիմացինին), ում աղոթքը միշտ Հայաստանի համար է ու իր զավակների, նաև հանապազօր սիրո համար է, որ ատելությունն ու չարը գոնե մի պուտ պակասեն աշխարհի երեսից:

Գեղարդ.- *Ի՞նչ թեմաներ կարելի է գտնել Դիանա Համբարձումյանի գրքերում:*

Պրոֆ. Դ.Հ.- Գլխավոր և հիմնական թեման, իհարկե, մարդն է, որից բխում են մյուս թեմաները. ինքնության փնտրտուք՝ այսօրվա ու անցյալ ժամանակների հայի ընդհանրությունն ու տարբերությունը, զուգահեռներ ներկա ու պատմական Հայաստանների միջև, ազգային առանձնահատկություններն իբրև ժամանակների մեջ գոյատևելու, արհավիրքներին դիմակայելու, իրական ձեռքբերումների, ինչպես նաև ցավալի կորուստների, պարտությունների և ազգային ողբերգությունների էական պատճառ («Աստծո բնակեցրած երկրում» վեպը, 2010), իր երկրից օտարված մարդու ողբերգությունը, որը, ի վերջո, հանգում է արտագաղթի, սոցիալական անարդարության թեմաներին՝ բացբացելով անհատ-հայրենիք հարաբերությունը, ինքն իրենից փախչելու անկարելիությունը, կին-տղամարդ կապի մեջ անգամ Ձիավորի՝ Հայաստանի խորհրդանիշի ներկայությունը, վտարանդի հայի հայացքով ընկալված եվրոպական իրականության թաքուն և անթաքույց բևեռացումները, միայնակ մարդու ողբերգությունը («Դուռը թակում են» վեպը, 2014):

Մարդը՝ ծննդի ու մահվան գաղտնիքը որոնելիս, կյանքը՝ լի դժբախտության ու երջանկության հարափոխությամբ, ինչո՞ւ և ինչպե՞ս է լինում լինելին:

Այս հարցերը պատասխաններ են որոնում՝ հին հունական առասպելի հանգույն՝ Ոդիսևսի ժամանակներից հայտնի փեակների տարաբախտությունը երևակելով Հայաստանի և Շվեդիայի միջև երկփեղկված մի հայ ընտանիքի պատմությամբ: Այս



թեմաներն են արծարծված «Փեակների տարաբախտություն» վեպում (2017), բնապահպանական աղետը, որի պատճառները մարդու ընչաքաղցությունն ու հոգևոր սնանկությունն են, մեղսավոր հոգիների՝ նարեկացիական բացբացումների ուղիով ընթացող, բայց արդեն աղետյալ, ավերված երկրի մարդկանց վերջին ճիգը՝ աշխարհը փրկելու կործանումից, հին աշխարհի նորոգման ու վերափոխման՝ առաջին հայացքից աներևակայելի (ֆանտաստիկ) թվացող առաջարկներ, որոնք միանգամայն իրականանալի ծրագրեր են, ինչպես ասում են՝ մարդու մտքին տեղ լինի, լուսինն էլ կբնակեցնի: Մարդկային հոգու մաքրության (էկոլոգիայի) պահպանման թեման, որի հիմքում տարբեր դավանանքների և ազգային պատկանելության տեր մարդկանց խաղաղ գոյակցության պայմանն է («Կանաչ մարգագետնի հմայքը» վեպը, 2020), մի գերդաստանի՝ չորս սերնդի կյանքի պատմություն՝ լի հոգս ու չարչարանքով, վախերով ու տագնապներով, կորուստներով, փոքր ու մեծ ուրախություններով, սիրով ու երջանկությամբ: Կյանքի հարափոփոխության, մարդու մտքի, վարք ու բարքի, հանրային կարգ ու կանոնի՝ հարյուր տարվա վայրիվերումների մեջ ընդգծվող պատերազմի ու խաղաղության, սիրո և ատելության, ծննդի ու մահվան, իրականի ու առասպելի թեման («Մեղր ու լեղի աշխարհ» վեպը, 2023):

Պատմվածքներս ու վիպակներս նույնպես այս բոլոր թեմաներն են արծարծում՝ հավելելով հայ-ազերի հարաբերություններին, ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ստեղծված նոր իրականությանն առնչվող թեմաները («Աստղակաթ», «Այրված կամուրջների վրայով» վիպակները, «Հեռագիր Ֆաթիմային» պատմվածքը և այլն), միայն թե՝ կենտրոնանալով պատումի մանրանկարչական հյուսվածքի վրա:

Գեղարդ.- *Գրքերի հայկական և միջազգային ցուցահանդեսների մասնակցո՞ւմ եք:*

Պրոֆ. Դ.Հ.- Հայաստանում գրքերի ցուցահանդեսները սովորաբար հրատարակիչների աշխուժության ցուցադրման, գրքերի գովազդի և վաճառքի լավագույն հարթակն են: Որպես գրող առանձնապես չեմ հետաքրքրվում, թե իմ գրքերն ինչպես են ներկայացվում այդ հարթակում: Բայց երբ արտասահմանյան գրական իմ այցելությունները (Ամերիկա, Կանադա, Ավստրիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա,

Շվեդիա, Իտալիա) համընկնում են այդ երկրներում կազմակերպված գրքի տոնավաճառներին, ապա անպայման այցելում եմ, ծանոթանում գրողների հետ, զրուցում, մտքեր ու գրքեր փոխանակում, պատմում Հայաստանի մասին, երբեմն էլ ընկերանում եմ ոմանց հետ, և մեր ընկերությունը շարունակվում է նամակագրությամբ։

Գեղարդ.- *Ինչպե՞ս եք տարածում ձեր գրքերը ոչ-հայկական միջավայրում և հայկական, բայց հայերեն չիմացող հատվածների մեջ:*

Պրոֆ. Դ.Հ.- Իմ «Տասը լավագույն պատմվածք» երկլեզու՝ հայերեն-անգլերեն ժողովածուն (2011) թարգմանվել է գերմաներեն (2014), ռուսերեն (2014), իտալերեն (2023) և լույս տեսել Գերմանիայում, Ռուսաստանում և Իտալիայում՝ «Հեռագիր Ֆաթիմային» վերնագրով, որն էլ նպաստել է, որ օտարալեզու ընթերցողները ծանոթանան իմ ստեղծագործությանը։ Ռուսերեն թարգմանված «Հեռագիր Ֆաթիմային» ժողովածուն (թարգմանիչներ՝ Սոնա Բաբաջանյան, Գայանե Մարկոսյան, Հասմիկ Գալուստյան, Արաքսյա Ասլանյան) բացվում է Ելենա Օկսանա Նիկոլաևնայի նախաբանով, որի այս պարզ խոսքը ինքնին խոսուն է. «Հատկապես ապշեցնող են զգացմունքների այն անկեղծությունը, ճշմարտացիությունն ու պայծառությունը, որով աչքի են ընկնում պատմվածքների հերոսները»։ Գրքի մասին նաև երկու գրախոսություն են գրել Ռուսաստանի տարբեր համալսարանների դասախոսներ (պրոֆեսոր Ելենա Մետելևա, դոցենտ Նինա Բյալոուս)։ 2018 և 2022 թվականներին հրավիրված էի Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ՝ գիրքը ներկայացնելու հայ և ռուս ընթերցողներին։ Ուրախ եմ, որ ներկաներից շատերը գնում էին գրքերս։

Անշուշտ, ես նաև սիրով նվիրում եմ ցանկացողներին։

Գրքերս գրանցվել են նաև գրադարաններում։ Գերմանիայում տպագրված «Հեռագիր Ֆաթիմային» գերմաներեն ժողովածուն (թարգմանիչներ՝ Գայանե Գինոյան, Վալերի Անգլեր) երկար տարիներ վաճառվում էր «Ամազոնում»։ 2015-ին Գայանե Գինոյանն ու ես հրավիրված էինք Մյունխեն՝ գրքի շնորհանդեսին։ Ներկաների մեծ մասը գերմանացի ընթերցողներ էին, որոնք ոչ միայն հարցեր էին բարձրացնում հայի ու Հայաստանի մասին, այլև սիրով գնեցին իմ ընծայագրած գրքերը։ Իտալերեն թարգմանված և



Վենետիկում հատուկ նշանակության հեռագիր էր պետք ուղարկել՝ հայերեն-իտալերեն ժողովածուն 2023-ին ներկայացվեց Վենետիկի՝ «Քաղաքակրթությունների խաչմերուկ» միջազգային գրական փառատոնում: Սիրտս փառավորվեց, երբ հանդիպեցի բազմաթիվ օտար և հայ ընթերցողների, որոնք ոչ միայն համբերատար սպասում էին, որ ընծայագրեմ գիրքս, այլև իրենց զորակցությունն էին հայտնում հայերին ու Հայաստանին: Գիրքը հիմա էլ վաճառվում է Վենետիկի «Կաֆոսկարինա» հրատարակչության գրախանութում: Այն 2023 թվականի ընթացքում անընդհատ եղել է իտալացի ընթերցողների ուշադրության կենտրոնում՝ Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր Սոնա Հարությունյանի ազնիվ ջանքի շնորհիվ: Նա ոչ միայն ղեկավարել է պատմվածքներս թարգմանած ուսանողներին, այլև ընդարձակ գրախոսություն-վերջաբան է գրել գրքի համար, հետագայում էլ գիրքը ներկայացրել է գրական տարբեր հանդիպումների և գիտաժողովների ընթացքում:

Իմիջիայլոց, «Տասը լավագույն պատմվածք» հայերեն-անգլերեն ժողովածուն շատ լավ էր վաճառվում Երևանի գրախանութներում: Բարեբախտաբար կամ ցավոք, հիմա այն ամբողջովին սպառվել է, անգամ ես չունեմ իմ գրապահարանում: Օտարերկրացի ընթերցողները, կարծում եմ՝ նաև անգլերեն ընթերցող սփյուռքահայերը գրախանութներում փնտրում էին հայ ժամանակակից գրողների անգլերեն թարգմանված գրքեր և հաճախ էին գնում իմ գիրքը (նախկին հայտնի «Արթբրիջ» գրախանութի վաճառողուհին մի օր ասաց՝ ափսոս չեք վերահրատարակում այդ գիրքը, մինչև հիմա կան մարդիկ, որ հարցնում են ձեր գրքի մասին, դրսից էլ են պատվիրել ու գնել):

Գիրքս նաև հայտնվել է ԱՄՆ-ի մի շարք գրախանութներում և գրադարաններում: Այդ մասին պատահաբար իմացել եմ տարբեր ընթերցողներից: Նաև՝ ես եմ գրքերս անձամբ նվիրել Կուրտ Վոնեգուտի գրադարան-թանգարանին, երբ 2017-ին Ինդիանապոլիսում մասնակցում էի գրական փառատոնի, ինչպես նաև Իլինոյի համալսարանին, որտեղ հանդես եկա դասախոսությամբ:

Գեղարդ.- *Որո՞նք են Դիանա Համբարձումյանի ապագայի ծրագրերը:*

Պրոֆ. Դ.Հ.- Նախ, ուզում եմ Հայաստան երկիրս տեսնել որպես խաղաղ, ապահով, կայուն զարգացող ու ինքնիշխան պետություն, որտեղ կկարողանամ առողջ և ստեղծագործ կյանքով ապրել. հոգիս ու մարմինս չեն դիմանում այն ճակատագրական և ողբերգական իրադարձություններին, որոնց միջով անցանք ու դեռ անցնում ենք

վերջին տարիներին: Եթե Հայաստանի հետ կապված իմ երազանքն իրականություն դառնա, կուզեի պատմվածքների նոր ժողովածու հրատարակել: Ինչպես արդեն ասել եմ, եթե վեպը իմ մեծ սերն է (վերջին տասնհինգ տարում հինգ վեպ եմ գրել), ապա պատմվածքն իմ առաջին սերն է (պատմվածքների երեք ժողովածու ունեմ), ուստի կուզեի այս տարի վերադառնալ իմ առաջին սիրուն և ի մի բերել վերջին տասը տարվա մեջ գրած, դեռ անտիպ կամ տարբեր գրական աղբյուրներում տպագրված պատմվածքներս, որոնք գրքով լույս չեն տեսել: Ես մի առանձին սիրով եմ նաև էսսեներ գրում, գուցե դրանք էլ ընդգրկեմ նույն ժողովածուում, քանի որ այդպես կամբողջանա իմ հայացքը՝ ուղղված մեր ժամանակին:



Որպես գրող շատ եմ ճանապարհորդում. միայն «գրող-բնակիչ» միջազգային ծրագրով հրավիրվել եմ արդեն երեք անգամ՝ Ավստրիա (2011), Կանադա (2014), Շվեդիա (2016): Այս տարի էլ հրավեր եմ ստացել՝ ամռանը մասնակցելու Կանադայի Վալ-Դավիդ քաղաքում կազմակերպվող գրական միջազգային փառատոնին և «գրող-բնակիչ» ծրագրին: Անհամբեր սպասում եմ, որ ստանամ Կանադայի մուտքի արտոնագիրը, բայց ավելի անհամբեր եմ՝ տեսնելու Հայաստանս կայուն և խաղաղ երկիր, որտեղ ընտանիքս ապահով կսպասի իմ վերադարձին:

*****

***Պրոֆեսոր Դիանա Համբարձումյանի մասին հավելյալ տեղեկությունների համար սեղմել [այստեղ](#)**: Գեղարդ*

There are no comments yet.